

**ԱՍԲԱ ՀԻՄՆԱԴՐԱՍԸ ԴԱՐՁԱՎ ՍԵԿՈՂԱՍ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ
ՖԵՂԵՐԱՑԻԱՅԻ ԱՍՈՑԱՑՎԱԾ ԱՆԴԱՍ**

4 հունիսի, 2013թ. - ՍԵԿՈՂԱՍ եվրոպական ֆեդերացիայի ընդհանուր ժողովը ս.թ. մայիսի 24-ին Դուբլինում կայացած նիստում հաստատել է ԱՍԲԱ հիմնադրամին՝ որպես ֆեդերացիայի ասոցացված անդամ: ՍԵԿՈՂԱՍ-ի նախագահ՝ Կուրտ Էլիասոնը նշել է, որ ՍԵԿՈՂԱՍ-ի համար չափազանց կարևոր է ընդլայնել անդամակցության շրջանակները՝ ներգրավելով ոչ միայն Եվրոպական Միության անդամ երկրներին, այլև Եվրոպական այն բոլոր երկրներին, որոնք անմիջական հետաքրքրվածություն են ցուցաբերում Եվրոպական Միության քաղաքականության ձևավորմանը: Այսպիսով, Հայաստանը հարավ-արևելյան Եվրոպայի և նախկին Խորհրդային Միության երկրներից առաջինը ձեռք բերեց մշտական կարգավիճակ Եվրոպական առաջատար բնակարանային կազմակերպության կողմից:

ՍԵԿՈՂԱՍ եվրոպական ֆեդերացիան ազգային և ռեգիոնալ սոցիալական բնակարանային ֆեդերացիաների ցանց է, որը միավորում է հանրային, կամավոր և կոոպերատիվ բնակարանային կազմակերպություններին ամբողջ Եվրոպայում: ՍԵՍՈՂԱՍ եվրոպական ֆեդերացիան հիմնադրվել է 1988թ. նպատակ ունենալով խթանելու պատշաճ բնակարանի իրավունքը յուրաքանչյուր անձի համար:

ԱՍԲԱ հիմնադրամի ասոցացված անդամակցությունը ՍԵԿՈՂԱՍԻՆ նոր հնարավորություններ կստեղծի Հայաստանյան կազմակերպության համար օգտագործելու սոցիալական և մատչելի բնակարանների ոլորտում եվրոպական կառույցի հարուստ փորձը: Հանդիսանալով սոցիալական և մատչելի բնակարանների եվրոպական ֆեդերացիայի անդամ ԱՍԲԱ-ն էլ ավելի կամրապնդի իր դերը ոլորտում կարողությունների զարգացման, ինչպես նաև մասնակցային քաղաքականության զարգացման գործում ինչպես Հայաստանում, այնպես էլ տարածաշրջանում: Այս անդամակցությունը հիմնադրամին հնարավորություն կընձեռի նաև Հայաստանի բնակարանային և սոցիալական բնակարանային խնդիրները ներկայացնելու Եվրոպական տարբեր աստիճաններում:

ԱՍԲԱ հիմնադրամը ստեղծվել է սոցիալական մատչելի բնակարանային ոլորտում հայ-հոլանդական համագործակցության արդյունքում և իր խորհրդի կազմում ներառում է ոլորտի առաջատար հայ և հոլանդացի փորձագետներ: ԱՍԲԱ հիմնադրամի նպատակն է խթանել Հայաստանում ցածր և միջին եկամուտ ունեցող ընտանիքների համար կայուն և մատչելի բնակարանների զարգացումը: Հիմնադրամը մշտապես ընդլայնում է իր գործընկերային ցանցը՝ ներդրումային ծրագրերի, կարողությունների զարգացման միջոցառումների և քաղաքականության մշակման մասնակցային գործընթացի իրականացման միջոցով: